

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀՈՒՓՈՒՄԵ ՎԱՅԵԻ ԹՈՐՈՍՅԱՆ

**ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐՆ ԱՐԴԻ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ
(գուգադրական քննություն)**

Ժ.02.02. - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

Երևան – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտխորհրդում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Լայիկ Մնացականի Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Գառնիկ Սերոբի Ասատրյան
Բ.Գ.Թ., դոցենտ Արմենուհի Արտուշի Ավագյան

Առաջատար կազմակերպություն՝ Սպահանի համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի մայիսի 23-ին, ժամը՝ 15:00 - ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում՝ գործող ԲՈԿ –ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. ապրիլի 11 - ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ Բ.Գ.Թ., դոցենտ *Զեֆ Եսեյան* Ս. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Դարձվածաբանության և դարձվածքի սահմանումները, դարձվածքների բաղադրիչների կապակցության տեսակների մասին ձևակերպումները տեղ են գտել լեզվաբանական մի շարք աշխատություններում և լեզվաբանական բառարաններում: Այդ ձևակերպումներն ու սահմանումները բնորոշում են դարձվածաբանության առարկան, դարձվածքի բնույթը, այդ միավորների բաղադրիչների կապակցության եղանակները, ինչպես նաև դարձվածքի տեսակները (դարձվածային կապակցություններ, դարձվածային սերտաճումներ, դարձվածային արտահայտություններ և դարձվածային միակցություններ): Չնայած բավական թվով ուսումնասիրություններին՝ այնուամենայնիվ լեզվի այս բաժնի ուսումնասիրությունը չի կարելի ավարտված համարել:

Որոշ մասնագետներ դարձվածք են համարում լեզվում եղած բոլոր կայուն բառակապակցությունները, այդ թվում՝ հարադրավոր բայերն ու գոյականները, բաղադրյալ շաղկապներն ու վերաբերականները, բաղադրյալ տերմիններն ու կլիշեները, առածներն ու ասացվածքները, թեևավոր խոսքերն ու իդիոմատիկ արտահայտությունները (Վ. Վինոգրադով, Ն. Շանսկի, Ա. Կունին, Ա. Ռեֆորմատսկի, Վ. Տեյխա, Ս. Գավրին և ուրիշներ): Լեզվաբաններից ոմանք էլ դարձվածք են համարում միայն իդիոմները (Բ. Լարին, Ա. Բաբկին, Ն. Ամոսովա, Ա. Մոլոտկով և ուրիշներ): Այս տեսաբաններն այն կարծիքին են, որ դարձվածքների՝ լայն իմաստով ըմբռնումը հնարավորություն չի տալիս բացահայտելու այդ կապակցություններին բնորոշ կողմերն ու յուրահատկությունները: Հայ լեզվաբանության մեջ դարձվածքը նեղ իմաստով են դիտարկում Ե. Գևորգյանը, Պ. Բեդիրյանը, Խ. Բաղիկյանը, Լ. Խաչատրյանը, Վ. Համբարձումյանը: Ի տարբերություն հայերենի դարձվածաբանական ուսումնասիրությունների՝ պարսկերենի դարձվածաբանական գրականությունը համեմատաբար փոքրաթիվ է: Հավանաբար այդպիսի ուսումնասիրությունների սակավության պատճառն այն է, որ պարսկերենում դարձվածքները բավականին լայն կիրառական ոլորտ ունեն՝ առօրյա-խոսակցականից մինչև գրական-գեղարվեստական, ընդհուպ պաշտոնական-իրապարակախոսական ոճերը: Դարձվածքներն այնքան են ձուլված պարսկերենի բառային կազմին, որ անհրաժեշտություն չի զգացվում դրանք ուսումնասիրելու որպես առանձին լեզվական միավորներ: Իրանցի լեզվաբանների՝ դարձվածաբանության վերաբերյալ տեսակետները սահմանափակվում են բառարաններում տրված մեկնաբանություններով: Պարսկերենի դարձվածքների տեսական ուսումնասիրությամբ զբաղվել են ռուս իրանագետներ Ա. Վերետենսիկովը, Լ. Պեյսիկովը, Յու. Ռուբինսկիը, Գ. Գոլևան, Ա. Բարիշնիկովը և ուրիշներ: Պարսկալեզու բանասիրական գրականության մեջ բուն դարձվածքներն անվանելու համար ընդունված եզրույթ չկա: Գործածվում է մի քանի բնորոշում՝ ըստ հեղինակի ընտրության. عبارات - 'ebārāt «արտահայտություններ», عبارات ریخته - 'ebārāt-e rixte «ամբողջական արտահայտություններ»,

اصطلاحات - estelāhāt, مصطلحات - mostalehāt «արտահայտություններ», استعارات - este'ārāt «իդիոմներ»:

Ատենախոսությունը նվիրված է արդի հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների ուսումնասիրությանը. դա հնարավորություն է տալիս տեղեկություններ ստանալու տվյալ լեզվակիր հանրության ազգային բնութագրի յուրահատկությունների, աշխարհընկալման ու աշխարհայացքի առանձնահատկությունների մասին: Չուզադրվող լեզուների՝ հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների ուսումնասիրությունը հատկապես կարևորվում է միջմշակութային հաղորդակցության առումով: Համեմատվող լեզուների դարձվածքների դիտարկումն ու զուգադրումը հնարավոր են դարձնում պարզելու տարբեր լեզվակիր հանրությունների լեզվամտածողության նմանություններն ու տարբերությունները:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Մեր աշխատանքի **նպատակն** է ներկայացնել արդի հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների իմաստային (թեմատիկ) խմբերը, միջկապակցական իմաստները, քերականական՝ ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները, ինչպես նաև ցույց տալ անվանողական, հաղորդակցական դարձվածքների կառուցվածքային առանձնահատկությունները:

Ատենախոսության խնդիրներն են բացահայտել արդի հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների կառուցվածքային ընդհանրություններն ու տարբերությունները և ցույց տալ, որ դարձվածքների այդ յուրահատկությունները պայմանավորված են ազգային լեզվամտածողության ինքնատիպությամբ:

Աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է արդի հայերենի ու պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների քննության անհրաժեշտությամբ: Այդպիսի քննություն մինչև այժմ չի կատարվել, և անհրաժեշտություն է առաջանում բացահայտելու երկու լեզուների դարձվածքների տիպաբանությունը՝ ձևակազմական և իմաստաբանական ընդհանրություններն ու տարբերությունները: Այդ կարգի քննությամբ կարելի է բացահայտել նաև ոչ միայն տարբեր լեզվակիր հանրությունների լեզվամտածողության յուրահատկությունները, այլ նաև աշխարհի լեզվաբանական կաղապարավորման առանձնահատկությունները: Պարսկերենի դարձվածքները, ի տարբերություն հայերենի դարձվածքների, տեսական համապարփակ ուսումնասիրության ենթարկված չեն: Այս առումով նույնպես աշխատանքը արդիական է:

Աշխատանքում կիրառել ենք նկարագրական, զուգադրական–համեմատական, տիպաբանական մեթոդներն ու դրանց մեկնաբանության եղանակները:

Ուսումնասիրության տեսական և գործնական արժեքը

Տեսական առումով հետազոտության արդյունքները կարող են նպաստել միջլեզվային տիպաբանական քննությունների ամբողջականացմանը դարձվածաբանության բնագավառում:

Գործնական առումով այն կարող է կիրառվել բուհական դասընթացներում՝ դարձվածաբանության և տիպաբանության առարկաների ուսուցման ընթացքում, նպաստել հայերեն-պարսկերեն կամ պարսկերեն-հայերեն դարձվածաբանական բառարաններ կազմելու գործընթացին:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք բաժանված են ենթագլուխների, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Այն համակարգչային 122 էջ է:

Ներածության մեջ քննվում են դարձվածաբանության տեսությանն առնչվող հարցերը, ներկայացվում են դարձվածքը լայն և նեղ իմաստով ըմբռնող լեզվաբանների տեսակետները, անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների բնույթը և հարակից այլ հարցեր:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների իմաստային (թեմատիկ) խմբերի ու միջկապակցական իմաստների քննությանը: Այն բաղկացած է երեք ենթագլուխից՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների իմաստային խմբերը, անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների թեմատիկ խմբերը, անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների միջկապակցական իմաստները: Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները հայերենում և պարսկերենում, ըստ իմաստային խմբերի, արտահայտում են.

ա) անձի արտաքին հատկանիշներ, օրինակ՝ հայ. արեգակի //արևի կտոր, ագռավի ճուտ, անձռնի ճուտիկ, ցամաք ձորի աղվես, օգոստոսի աղվես, տանձի կոթ, ջանը տեղը, սարի նման // ~ պես, պրսկ. ماه شب چهارده - māh-e šāb-e čahārdah՝ գեղեցիկ (բռց. տասնչորսերորդ գիշերվա լուսին), مثل هلوی پوست کنده - mesl-e holu-ye pust-kānde՝ շատ գեղեցիկ (բռց. մաքրած դեղձի նման), مثل کون میمون - mesl-e kun-e meymun - տգեղ (բռց. կապիկի հետույքի նման), مثل تار ریسمان - mesl-e tār-e rismān՝ շատ նիհար (բռց. լարի նման), آب زیر پوستش دوید - āb zir-e pust-aš david (բռց. Ջուրը վազեց մաշկի տակ:), مثل نردبان دزدها - mesl-e nardebān-e dozdihā (բռց. գողերի աստիճանի նման),

բ) անձի ներքին հատկանիշներ, օրինակ՝ հայ. ամուր ձեռք, երկաթե ձեռք, ոսկի սիրտ, լայն սիրտ, գորտի արյուն ունեցող // գորտի արյունով, թունավոր լեզու, օձի կծած, քիթը բարձր, քիթը ցած, պրսկ. سر به راه بودن - sar be rāh budan (բռց. գլուխը ճամփին լինել), سر به زیر بودن - sar be zir budan (բռց. գլուխը ներքև լինել), برج زهر مار - borj-e zahr-e mā (բռց. օձի թույնի աշտարակ), مست است. نخورده - Naxorde mast ast. մեծամիտ (բռց. Չխմած՝ հարբել է):

Հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները բաշխվում են հետևյալ թեմատիկ խմբերի. գունանուններ, սոմատիզմներ, կենդանանուններ, բուսանուններ, կրոն, բնություն և այլն: Տարբեր թեմատիկ խմբերի մեջ ընդգրկված դարձվածքներն արտահայտում են ամենատարբեր հատկանիշներ:

Հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների շրջանակներում առկա են դարձվածային տարբերակների գրեթե բոլոր տեսակները՝ բառային, քերականական (ձևաբանական ու շարահյուսական), քանակային, հնչյունական և ուղղագրական: Դարձվածային տարբերակները մի կողմից՝ ենթադրում են տարբերակային բոլոր զույգերում կամ շարքերում բովանդակային պլանի պահպանում, մյուս կողմից՝ արտահայտության պլանի փոփոխություն կամ տարբերակվածություն:

Հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքներին բնորոշ են հոմանշային ու հականշային ձևաիմաստային խմբերը: Հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող հոմանիշ դարձվածքները տարակառույց կապակցություններ են: Հայերենում դրանք հիմնականում անվանողական են, պարսկերենում հանդիպում են և՛ անվանողական, և՛ հաղորդակցական կառույցներ: Հմտ. հայ. թունավոր լեզու - օձի կծած (չար), ամուր ձեռք - ասլանի բերան ճողո (ուժեղ), ցամաք ձորի աղվես - ասեղ կերած շուն - տանձի կոթ (սիհար, հյունծված), ագռավի ճուտ - գիշերվա սատանա (տգեղ), արևի կտոր - լուսնկա երես (սիրուն, գեղեցիկ), պրսկ. دهانش مثل هلی پوسست کنده - ماه, Zabān-aš band āmad. - Dahān-aš bāz mānd. - Āb az lab o lučē-aš mi-rix. զարմացած, հիացած (բռց. Լեզուն կապ ընկավ: Բերանը բաց մնաց: Ջուրը բերանից գնում էր:), mesl-e holu-ye pust kande - māh-e šab-e čahārdah՝ գեղեցիկ, սիրուն (բռց. մաքրած դեղձի նման - տասնչորսերորդ գիշերվա լուսին): Հականիշ դարձվածքները արտահայտում են հակադիր, միմյանց ներհակ իմաստներ: Այս դարձվածքները կարող են կազմվել հականիշ բաղադրիչով կամ լինել տարակառույց: Հականիշ բաղադրիչներով կազմված դարձվածքներից են՝ *երեսը սև* (խայտառակված, վարկաբեկված)- *երեսը սպիտակ* (պարզերես), *ձեռքը բաց* (առատածռն) – *ձեռքը փակ* (ժլատ): Պրսկ. رو سیاه - ru siyāh- սևերես - رو سفید - ru sefid-պարզերես, دست و دل گرسنه - dast o del gorosne - ժլատ, անկուշտ, دست و دل پاک - dast o del pāk- ազնիվ, մաքուր:

Տարակառույց հականիշ դարձվածքները միմյանցից տարբերվում են բաղադրիչների կազմով. օրինակ՝

Հայ.	Պրսկ.
աղ ու հացով – կոպեկի համար հոգի սվող	چشم و دل پاک - نانث به گلو فرو نمی رود. češm o del pāk - Nān-aš be galu foru nemi ravad.

շան պես աշխատել – ճանճ քշել	مثل سگ جان کندن – مگس پر اندن mesl-e sag jân kandan- magas parândan
ուռենու պես դողալ – առյուծի սիրտ ունենալ	مثل بيد لرزيدن – دل شیر داشتن mesl-e bid larzidan – del-e šir dāštan

Իմաստային համարժեքության տեսանկյունից զուգադրվող լեզուների դարձվածքների մեջ կարելի է առանձնացնել համարժեքներ, համապատասխանություններ և անհամարժեք դարձվածքներ: Դարձվածային համարժեքներն ու համապատասխանությունները, ինչպես նաև անհամարժեք դարձվածքները վկայում են, որ, չնայած ընդհանրություններին, երկու լեզուները մշակել են այնպիսի կապակցություններ, որ բնորոշ են իրենց: Հայերենի և պարսկերենի համարժեք դարձվածքներն ունեն արտահայտության և բովանդակության պլանների նույնություն, օրինակ՝

Հայ.	Պրսկ.
շուն ու կատվի նման	مثل سگ و گربه mesl-e sag o gorbe
ծեր գայլ	گرگ پیر gorg-e pir
նեղ աչք	تنگ چشم tang-čašm
զուլիսը քորելու ժամանակ չունենալ	وقت سر خاریدن نداشتن vaqt-e sar xāridan nadāštan
առյուծի սիրտ ունենալ	دل شیر داشتن del-e šir dāštan
թրջված մուկ	موش آب کشیده muš-e āb kešide

Դարձվածային համապատասխանությունները նույնական են բովանդակության պլանով, իսկ արտահայտության պլանում տարբերվում են: Հմտ. «**Օձի կծածի պես**» և «**mesl-e mār-e zaxm xorde**» կապակցությունները հայերենում և պարսկերենում բաղադրիչներով մասամբ համընկնում են: Երկու կապակցություններն էլ կառուցվածքային պլանով համեմատություն–դարձվածքներ են, կազմված են **նման/mesl** կապի և **կծած/zaxm xorde** (հայերեն) հարակատար և (պարսկերեն) անցյալի դերբայներով: Պարսկերեն դարձվածքի մեջ գործածվել է zaxm xorde `«վիրավորված» բաղադրիչը: «**Կարմիրը երեսից կաթել**» և «**xun az surat-e kasi čekidan**» դարձվածքներն ունեն «առողջ, լավ տեսքով» իմաստները: Հայերեն կապակցությունը կազմված է **կարմիր** գուճանուն–բաղադրիչով, իսկ պարսկերենը՝ **xun` արյուն** բաղադրիչով: «**Ձվից նոր դուրս գալ**» և «**man az zir-e gol birun nayāmadam**» դարձվածքներն արտահայտում են «անփորձ, ոչ հմուտ» իմաստները: Հայերեն

և պարսկերեն օրինակներն ունեն բաղադրիչների տարբեր կազմ: «Ձու» բաղադրիչին պարսկերենում փոխարինում է *gol*՝ «ծաղիկ» բաղադրիչը, «Նոր» բաղադրիչը բացակայում է: Հայերեն դարձվածքի բայական բաղադրիչն արտահայտված է բայի անդամ ձևով, իսկ պարսկերենում՝ դիմավոր ձևով:

Անհամարժեք դարձվածքները բնորոշ են գուլգարվող լեզուներից յուրաքանչյուրին և համարվում են ինքնատիպ կապակցություններ: Հայերենին բնորոշ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների մի մասը լեզվում ամրագրվել է Աստվածաշնչից, օրինակ՝ *Աբրահամի գառ* – հեգ, հնազանդ, *Ադամի հագուստով* - մերկ, *Ադամի եգ* – ծույլ, անհոգ, *Նոյի ագռավ* - մի գործի ուղարկված և չվերադարձած: Հայերենին բնորոշ են նաև հեղինակային դարձվածքներ, որոնք ստեղծվել են որևէ գրողի կամ բանաստեղծի կողմից, օրինակ՝ *Քաջ Լազար* - քաջ ձևացող, բայց շատ վախկոտ, *Ձախորդ Փանոս* – անհաջողակ: Պարսկերենին բնորոշ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքներն իմաստային պլանում պատճառաբանված չեն. կապակցությունների նշանակությունը չի բխում առանձին բաղադրիչների իմաստից: Օրինակ՝ *bā šāh pālude naxordan* դարձվածքում *ազգային ճաշատեսակի* անվանում է *pālude* բաղադրիչը: **Ֆալուդեն (փալուդեն)** իրանական ավանդական աղանդեր է, որ պատրաստվում է վարդաջրից, լայմի հյութից և օսլայից: **Qorme-aš gušt nadārad** կապակցությունում **qorme** բաղադրիչն է ճաշատեսակի անվանում: **Ղորմեն** պատրաստվում է մանր կտրատված մսից, որ տապակում են սոխով և կանաչիով: Պարսկերենում որոշ դարձվածքների բաղադրիչներ կապված են *պատմական անձնավորությունների* հետ: Այսպես, օրինակ **mesl-e madār-e Vahab** դարձվածքում **Վահաբ** բաղադրիչը նախախլամական արաբական ժամանակաշրջանի դյուցազնի անուն է, որ սպանվել է հակառակորդների դեմ պայքարում: Նրա անվախ և քաջ մայրը գուրգով գետնին է տապալում որդուն սպանողին:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների կառուցվածքային տիպերն արդի հայերենում և պարսկերենում», ունի երկու ենթագլուխ: Առաջին ենթագլուխը նվիրված է անվանողական դարձվածքների կառուցատիպերին: Անվանողական դարձվածքների շարքն են դասվում գոյականական, ածականական և բայական դարձվածքները: Հայերենի և պարսկերենի գոյականական դարձվածքները հիմնականում երկբաղադրիչ են և ձևավորվում են նույնական՝ գոյական+գոյական (հայ. *դրում գլուխ* - դատարկամիտ, բթամիտ մարդ, *հավի ճուտ* - թույլ, անգոր, պրսկ. میوه دل - mive-ye del՝ սիրելի (զավակ մասին) (բռց. սրտի միրգ), اهل عمل - ahl-e a'mal՝ գործուկյա (բռց. գործի հետևորդ)), ածական +գոյական (հայ. *հին գայլ* – փորձառու, գործիմաց, *տարեց երեխա* – տղայական շարժումներով, պրսկ. یقه چرکین - yaqe-čerkin՝ ցածր խավին պատկանող (բռց. կեղտոտ օձիք), دم کلفت - dom-koloff՝ հարուստ (բռց. հաստ պոչ), کلاه نامدی - kolāh-namadi՝ հասարակ, դիրք չունեցող (բռց. թաղիքե գլխարկ)) և դերբայ+գոյական (հայ. *շուն բռնող* – անգործ, պարապ, թափառաշրջիկ, *ճանճ քշող* – պորտաբույծ, *կոտրած գրպ*

– մի բանի անկոչի պես խառնվող, պրսկ. پاچه ور ماییده - pāče-varmālide` ճարպիկ (բռց. տաբաստի փողքերը ծալած), دم بریده - dom-boride` խորամանկ (բռց. պոչը կտրած)) կաղապարով: Հայերենի` ածական+գոյական կաղապարով կապակցություններին պարսկերենում համապատասխանում են շրջուն կաղապարով կառուցվածները. պարսկերենում լրացում-լրացյալ հարաբերությունը հետադաս է և արտահայտվում է իզաֆեթային կապով: Պարսկերենում, ի տարբերություն հայերենի, գոյականական դարձվածքների կազմությանը կարող է մասնակցել նաև բայի հիմքը` շարադասվելով գոյականից հետո, օրինակ` خال باز -xāl-bāz` խաբեբա (բռց. խաղացող, خنر رنګ کن -xar-rang-kon` խաբեբա (բռց. էշ ներկող)): Եռանդամ և քառանդամ կապակցությունները ավելի քիչ են:

Հայերենում ածականական դարձվածքներն ավելի շատ են, քան պարսկերենում: Երկբաղադրիչ դարձվածքները հայերենում ձևավորվում են անուն խոսքի մասերով, իսկ պարսկերենում` նաև բայի խոնարհված ձևով և կապով. հմմտ. հայ. Աղամի զգեստով – մերկ, արուռը երեսին – ամոթխած, Աստծու գառ – խելոք, հնազանդ, խոտը բերանին – խեղճ, հիմար, կողը հաստ – համառ, արյունը տաք – ակտիվ, շուտ բորբոքվող, կաշին հաստ – համառ, լեզուն երկար – շատախոս, շաղակրատ, խելքը կարճ – հիմար, անխելք, գրպանը ծակ – աղքատ, ականջը ծանր – վատ լսող, պրսկ. ندانم کار - nadānam- kār` անմիտ, անհեռատես (բռց. գործ` բան չգիտեմ), تنگ چشم - tang- čašm` ժլատ (բռց. նեղ աչք), مثل آفتاب - mesl-e āftab` շատ գեղեցիկ (բռց. արևի պես):

Հայերենի եռանդամ դարձվածքները կազմվում են հիմնականում երկու գոյականով և դերբայով կամ երկու գոյականով ու ածականով, օրինակ` ուղտի սկանջում քնած – անտեղյակ, աշխարհից կտրված, բախտից երես առած – հղիացած, ցամաք ձորի աղվես – շատ նիհար, երեսի կաշին հաստ – անինքնասեր: Պարսկերենում եռանդամ դարձվածքների կազմությանը մասնակցում են նաև բայի խոնարհված ձևերը, նախդիրները և մակբայները, օրինակ` تو دل برو - tu del boro (բռց. սրտի մեջ գնացող) – սրտահաճո, سر به زير sar be zir (բռց. գլուխը ներքև) – խոնարհ, հնազանդ: Հայերենի քառանդամ դարձվածքների կազմությանը մասնակցում են դերբայները` հարակատար կամ ենթակայական, օրինակ` երեսը բորի ջրով լվացած – անպատկառ, լկտի, ձկից նոր դուրս եկած – անփորձ: Զառանդամ ածականական կապակցությունները պարսկերենում համեմատություն դարձվածքներ են, օրինակ` مثل جن ماسفند روی آتش - mesl-e jen-e bu dāde` ճարպիկ (բռց. բոված ջինի նման), مثل اسفند روی آتش - mesl-e esfand ru-ye ātaš` բռնկուն, անհանգիստ (բռց. սպանդ` կրակի վրա):

Հայերենի և պարսկերենի` անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքներն անվանողական կապակցություններ են, որոնք, հարացուցային ձևեր ընդունելով, կատարում են նաև հաղորդակցական գործառնույթ: Օրինակ` ուղտի սկանջում քնել և ձկի մեջ մազ դրոնել դարձվածքները հաղորդակցական գործառնույթով կարող են հանդես գալ ստորոգյալի պաշ-

տոնով: Մինչդեռ նրանց հարացուցային որոշ ձևեր՝ հարակատար և ենթակայական դերբայով, ունեն անվանողական արժեք, հանդես են գալիս ածականի գործառնությով՝ բնութագրելով անձին կամ անձանց, ինչպես՝ *ուղտի ականջում քնած* - անտարբեր, աշխարհից կտրված, *ծվի մեջ մազ որոնող* - բծախնդիր, մանրախնդիր և այլն: Բայական դարձվածքների այս հատկանիշը նկատի ունենք, երբ դրանք քննում ենք որպես անձի հատկանիշ արտահայտող կապակցություններ: Ըստ այդմ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բայական դարձվածքների հարակատար կամ ենթակայական դերբայներն են նման կապակցություններին վերագրում հատկանշային իմաստներ. հմմտ. ուղտի ականջում քնել //~ քնած, ծվի մեջ մազ որոնել // ~ որոնող և այլն:

Բայական դարձվածքները, ըստ բաղադրիչների քանակի, հայերենում և պարսկերենում լինում են երկբաղադրիչ, եռաբաղադրիչ և բազմաբաղադրիչ: Երկբաղադրիչ դարձվածքների անվանական մասը հիմնականում արտահայտվում է գոյականով կամ ածականով, իսկ բայական մասը՝ անորոշ դերբայով, օրինակ՝ հայ. *գլուխ ունենալ* - 1. խելոք, գիտակից լինել, 2. գիտակ լինել, *խոտ ուտել* - անհասկացող, հիմար լինել, *սիրտ չունենալ* - անգութ, անխիղճ լինել և այլն, պրսկ. دل داشتن - del dāštan՝ ուժեղ, քաջ լինել (բռց. սիրտ ունենալ), لنگه ناداشتن - lenge nadāštan -աննման լինել (բռց. գույգ չունենալ): Պարսկերենում երկբաղադրիչ կապակցությունների անվանական մասում կարող է հանդես գալ նաև նախդիր, օրինակ՝ به خود نازیدن - be xod nāzidan՝ մեծամիտ լինել (բռց. ինքն իրեն հպարտանալ), به خدا رسیدن - be xodā residan՝ տանջված, անուժ լինել (բռց. Աստծոն հասնել):

Հայերենում եռաբաղադրիչ բայական դարձվածքների բաղադրիչ են դառնում հիմնականում գոյականներն ու ածականները, ինչպես՝ *սիրտը քար լինել* - անգութ լինել, *սիրտը բաց լինել* - անկեղծ, զվարթ՝ ուրախ լինել, *գրպանում մկներ խաղալ* - շատ աղքատ լինել: Պարսկերենի եռանդամ բայական դարձվածքները երկբաղադրիչ դարձվածքներից ավելի շատ են: Գոյական+լրացում+բայ կառուցատիպով դարձվածքները համապատասխանում են՝ ա) հայերենի *գոյական+գոյական+բայ* կապակցություններին ինչպես՝ *հավի խելք ունենալ* - ապուշ, հիմար, *շան բախտ ունենալ* - հաջողակ, շատ բախտավոր, բ) *գոյական + ածական + բայ* կաղապարն ունեցող դարձվածքներին, ինչպես՝ *երեսը սպիտակ լինել* - պարզերես, *փափախը ծուռ (թեք) դնել* - անհոգ, առանց վախենալու ապրել, պրսկ. مغز خر خوردن - mağz-e xar xordan՝ հիմար (բռց. Էջի ուղեղ ուտել), دل شیر داشتن - del-e šir dāštan՝ քաջ (բռց. առյուծի սիրտ ունենալ):

Պարսկերենում քառաբաղադրիչ և բազմաբաղադրիչ դարձվածքներն ավելի շատ են և ձևավորվում են տարբեր կառուցատիպերով. գոյական+(xod անդրադարձ դերանուն) + rā ետադրություն + (նախդրավոր-անվանական կառույց) +բայ - نان را به نرخ روز خوردن - nān rā be nerx-e ruz xordan՝ իրավիճակին հարմարվող (բռց. հացն ըստ օրվա արժույթի ուտել), xod անդրադարձ դերանուն +rā ետադրություն +նախդրավոր-գոյականական կառույց+բայ -

خود را به موش مردگی زدن - xod rā be muš-e mordegi zadan՝ թույլ, հիվանդ ձևացող (բռց. իրեն մեռած մկան տեղ դնել) և այլն: Պարսկերենի բազմաբաղադրիչ դարձվածքների շարքում առանձնանում են շրջանակային կառույցով կապակցությունները, օրինակ՝ سبزی کسی را پاک کردن - sabzi-ye kasi rā pāk kardan՝ շոդոքոթ լինել (բռց. մեկի կանաչին մաքրել), ارزن از لای انگشت کسی نریختن - arzan az az lâ-ye angošt-e kasi narixtan՝ ժլատ լինել (բռց. մատներից ցորեն չթափվել) :

Հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող հաղորդակցական դարձվածքները հիմնականում լինում են համառոտ և ընդարձակ կառուցատիպերի: Կազմությամբ բարդ հաղորդակցական դարձվածքները մեծ թիվ չեն կազմում զուգադրվող լեզուների դարձվածքների շտեմարանում: *Կազմությամբ պարզ* հաղորդակցական դարձվածքները տարածված են և՛ հայերենում, և՛ պարսկերենում: Պարսկերենի այս կապակցությունների կառուցվածքային առանձնահատկություններից է կցական դերանունների մասնակցությունը դարձվածքների ձևավորմանը: Այդ դերանունները հիմնականում արտահայտվում են 3-րդ դեմքով և եզակի թվով, օրինակ՝ زخمش گرم است - Zaxm-aš garm ast. Շատ բան չի գիտակցում, չի հասկանում: (բռց. (Նրա) վերքը տաք է:), زندگی اش زندگی سگ است, -Zendegi-aš zendegi-ye sag ast. Աղքատ է, ծանր է ապրում: (բռց. (Նրա) Կյանքը շան կյանք է:): Հայերենի հաղորդակցական դարձվածքներից են, օրինակ, *Մարմանդ ջուր է* (արտաքուստ հանգիստ բարի, բայց խորամանկ, նենգ), *Մեջքը պինդ է* (1. հարուստ, ունևոր, 2. հզոր պաշտպանություն ունեցող): Հայերենում բարդ կազմությամբ հաղորդակցական կապակցությունները հիմնականում առած-ասացվածքներ են. *Գայլի գլխին ավետարան ես կարդում, ասում է՝ ոչխարը սարովն անցավ* (անուղղելի): *Հոգին ուզես՝ չի խնայի* (մեծահոգի, առատաձեռն): Պարսկերենում հազվադեպ են հանդիպում բարդ կազմությամբ հաղորդակցական դարձվածքներ, ինչպես՝ Ćešm-aš hezār kār mi konad ke abru-yaš nemi dānad. շատ խորամանակ (բռց. Աչքը հազար գործ է անում, որ հոնքը չգիտի:), كاردش بزنی - Kārd-aš bezani xun-aš dar nemi āyad՝ կատաղած, ջղային (բռց. Դանակ խփես՝ արյուն դուրս չի գա:):

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների քերականական առանձնահատկություններին: Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները, ունենալով գոյականի, ածականի, բայի խոսքիմասային արժեք, ի հայտ են բերում այդ խոսքի մասերին բնորոշ ձևաբանական հատկանիշներ: Առաջին երթազվիտում դիտարկվել են հայերենի և պարսկերենի անվանողական դարձվածքների ձևաբանական առանձնահատկությունները, ցույց են տրվել ինչպես դրանց ընդհանրությունները, այնպես էլ տարբերությունները: Հայերենի գոյականական դարձվածքներին հատուկ են հոլովի և թվի կարգերը, պարսկերենի դարձվածքներին՝ միայն թվի կարգը: Գոյական + գոյական կառուցատիպով դարձվածքներում առաջին բաղադրիչը հիմնականում արտահայտվում է սեռական հոլովով, երկրորդը՝

ուղղականով, ինչպես՝ *հոգու ախպեր* – շատ հարազատ, *կալի եզ* – ձրիակեր մարդ, *մեխի գլուխ* – ավելորդ: Եռաբաղադրիչ գոյականական դարձվածքներում առաջին բաղադրիչն արտահայտվում է սեռական, երկրորդը՝ գործիական, երրորդը՝ ուղղական հիլովներով ինչպես՝ *գառան մորթով գալլ*, *սիրամարզի փետուրներով ագռավ* և այլն: Թվականով և գոյականներով ձևավորված դարձվածքներում գոյականներն արտահայտվում են սեռական և ուղղական հիլովներով, *յոթ ծովի մերան*– շատ բան տեսած, խորամանկ, *յոթ գուլթանի տեր*– շատ հարուստ: Ածականով և գոյականով կազմված դարձվածքներում գոյականը հանդես է գալիս ուղղական հիլովով, օրինակ՝ *հին գալլ* – ճարպիկ, *սպիտակ ագռավ* – բլորից տարբերվող՝ առանձնացող, *երկայթե բազուկ* – ուժով՝ բռնությամբ ղեկավարող, *տարեց երեխա* – միամիտ: Երկու գոյականով և ածականով կազմություններում առաջին գոյականը սեռական հիլովով է, երկրորդը՝ ուղղականով, ինչպես՝ *աչքի արդար յուղ* – թանկագին, ամենասիրելի (հեզնական իմաստով), *վերին արտի ցորեն* – ընտրյալ, արտոնյալ: Գոյական + դերբայ (կամ դերբայական դարձված) կապակցություններում գոյականն արտահայտվում է ուղղական կամ հայցական հիլովներով. *թրջված հավ* – խեղճ ու անճար, *էշ ներկող* – խաբեբա, *շուն բռնող* – անգործ, պարապ, թափառաշրջիկ, *ճանճ քշող* – պորտաբույծ: Պարսկերեն գոյականական դարձվածքների բաղադրիչները միանում են իզաֆթային կապով, օրինակ՝ شمع مجلس - šam-e majles-սիրելի (հասարակության մեջ) (բռց. հավաքույթի մոմը), جوفروش گندم - juforuš-e gandomnamā՝ երկերեսակի (բռց. ցորեն ցույց տվող, բայց գարի վաճառող): Թվի քերականական կարգը բնորոշ է հայերենի և պարսկերենի գոյականական դարձվածքներին: Գոյականները՝ որպես դարձվածքների գերադաս բաղադրիչներ, հիմնականում հանդես են գալիս եզակի թվով, օրինակ՝ հայ. *ասեղ կերած շուն* – շատ նիհար, հյուժված, *ատամները հանած գալլ* – այլևս վտանգ չներկայացնող, *կաթ թափած կատու* – մոլորված, վախեցած, պրսկ. شمع مجلس - šam-e majles՝ սիրելի (հասարակության մեջ) (բռց. հավաքույթի մոմ), بچه ریش دار - bače-ye rišdār՝ երեխայի ուղեղով (տարեց մարդու մասին) (բռց. մորուքով երեխա): Հոգնակի թվով բաղադրիչ ունեցող դարձվածքներ հայերենում չեն հանդիպում: Պարսկերենում վկայված է մեկ դարձվածք՝ مثل نردبان دزد ها - mesl-e nardebān-e dozdhā - բարձրահասակ (բռց. գողերի աստիճանի նման):

Ածականը՝ որպես խոսքի մաս, թեև հարուստ չէ ձևաբանական հատկանիշներով, այնուհանդերձ ածականական դարձվածքները որոշ ձևաբանական առանձնահատկություններ են ցուցաբերում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ածականական դարձվածքների կազմությանը մասնակցում են ոչ միան ածականներ, այլ նաև ուրիշ խոսքի մասեր: Հայերենի՝ գոյական + ածական կաղապարով դարձվածքներում ածականական բաղադրիչը միշտ հանդես է գալիս դրական աստիճանով, օրինակ՝ *կողմ հաստ* – համառ, *արյունը տաք* – ակտիվ, շուտ բորբոքվող, *կաշին հաստ* – համառ,

խելքը կարծ – հիմար, անխելք: Եթե դարձվածքը ձևավորվել է գոյական+ածական կաղապարով, և գոյականը արտահայտված է ուղղական հոլովով, ապա գոյականական բաղադրիչը միշտ գործածվում է որոշյալ հոդով, օրինակ՝ *երեսը բաց, սիրտը բաց, ձեռքը բաց, գրպանը ծակ, աչքը ծակ, բերանը բաց, ձեռքը թեթև* և այլն: Եթե ածականական դարձվածքը կազմվել է գոյականներով, այդ դեպքում դրանց երկրորդական բաղադրիչն արտահայտվում է թեք հոլովով, ինչպես՝ *Աղամի զգեստով* – մերկ, *աբուռը երեսին* – ամոթխած, *ոտքը գերեզմանում* – տարիքն առած, շատ ծեր, *աչքի լույս* – սիրելի, *աչքի փուռ* – չսիրված, ատելի: Պարսկերենի ածականական դարձվածքների ձևաբանական հատկանիշները հստակ չեն առանձնանում պայմանավորված այն հանգամանքով, որ այդ կապակցությունները ձևավորվում են տարբեր կառուցատիպերով, որոնցում բաղադրիչ անդամներին բնորոշ ձևաբանական կարգերը ցայտուն չեն արտահայտվում:

Հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքները բաղկացած են անվանական և բայական բաղադրիչներից. յուրաքանչյուր բաղադրիչ ունի իրեն հատուկ ձևաբանական հատկանիշներ: Եթե բայական դարձվածքների անվանական մասը գոյական է, ապա այն բնութագրվում է հոլովի, թվի քերականական կարգերով: Եթե կապակցությունը երկբաղադրիչ է, անվանական մասի գոյականը հիմնականում արտահայտվում է հայցական հոլովով, օրինակ՝ *գլուխ ունենալ* - 1. խելքը, գիտակից լինել, 2. գիտակ լինել, *այծեր ունենալ* – կամակոր լինել, *խոտ ուտել* - անհասկացող, հիմար լինել, *աչք չբանալ* – անընդհատ զբաղված լինել: Պարսկերենում բայական դարձվածքների գոյականական բաղադրիչը զուրկ է հոլովի քերականական կարգից:

Պարսկերենի բայական դարձվածքների գոյականական անդամին հատուկ չէ առկայացման քերականական կարգը: Թվի քերականական կարգը հատուկ է հայերենի և պարսկերենի բայական դարձվածքների անվանական բաղադրիչներին: Կան կապակցություններ, որոնց գոյականական անդամը կարող է գործածվել և՛ եզակի, և՛ հոգնակի թվով, ինչպես՝ հայ. *աչքում//աչքերում* յուզ լինել, պրսկ. *چشمهایش سگ داشتند* // *چشمش* - čašm-aš // **čāšm-hāyaš** sag dāštan՝ գրավիչ, ձգող հայացք ունեցող մարդ (բռք). Աչքում//աչքերում շուն ունի:)

Բայական դարձվածքների բայական բաղադրիչին հատուկ են բայ խոսքի մասին բնորոշ քերականական կարգերը: Թե՛ հայերենում, թե՛ պարսկերենում բայական դարձվածքների գերադաս բաղադրիչը կարող է արտահայտվել անցողական կամ անանցողական բայերով, թեև այդ հատկանիշը չի պարտադրում ամբողջ կապակցության սեռային նշանակությունը: Երբեմն անցողական բայ-բաղադրիչով բայական կապակցությունն արտահայտում է չեզոք սեռի իմաստ, որը պայմանավորված է դարձվածքների՝ իբրև լեզվական ամբողջության բնույթով. հայ. *գլուխ ունենալ* - 1. խելքը, գիտակից լինել, 2. գիտակ լինել (ունենալ- ներգործական սեռ, գլուխ ունենալ- չեզոք սեռ), *այծեր*

ուևենալ – կամակոր լինել (ուևենալ-ներգործական սեռ, այծեր ուևենալ-չեզոք սեռ), պրսկ. مگس پراندن - *magas parāndan`* ծուլլ լինել (բռց. ճանճ թռցնել), دم جنباندن - *dom jombāndan`* խորամանկ, քծնող լինել (բռց. պոչը շարժել):

Բայական դարձվածքների յուրահատկությունն այն է, որ դրանց բայական բաղադրիչները կարող են հանդես գալ նաև ժամանակի, դեմքի, թվի քերականական կարգերով, թեև այդ բաղադրիչները գործառնապես սահմանափակ հարացուցային ձևեր ունեն:

Երկրորդ ենթազիտում անդրադարձ է կատարվում անձի հատկանիշ արտահայտող անվանողական դարձվածքների շարահյուսական առանձնահատկություններին: Հայերենի գոյականական դարձվածքների բաղադրիչներն արտահայտում են ստորադասական և համաստորադասական հարաբերություններ, պարսկերենում բաղադրիչները կապակցվում են գլխավորապես իզաֆեթային կապով, հմմտ. հայ. *Աբրահամի գառ* – հեզ, *աշխարհի աչք* – բլուրի կողմից սիրելի, *աստղով մարդ* – հաճելի, դուրեկան, *անհոտ ծաղիկ* – անհրապույր, վանող, *իր լավն ու վատը չհասկացող, գրի սևն ու սպիտակը չըրկող* – կիսագրագետ, պրսկ. ميوه دل - *mive-ye del`* սիրելի (զավակի մասին) (բռց. սրտի միոզ), بوم شوم - *bum-e šum`* դժբախտություն բերող (բռց. դժբախտություն բերող բու), مثل لیلی و مجنون - *mesl-e Leili va Majnun`* խենթ սիրահարված (բռց. Լեյլիի ու Մաջնունի նման), مثل سگ و گریه - *mesl-e sag va gorbe`* շուն ու կատվի նման: Հայերենի և պարսկերենի գոյականական դարձվածքները կատարում են այդ խոսքի մասին բնորոշ շարահյուսական գործառնությունը՝ հանդես գալով որպես *ենթակա, ստորոգելիական վերադիր, անուղղակի խնդիր, որոշիչ, ձևի պարագա, կոչական*:

Անձի հատկանիշ արտահայտող ածականական դարձվածքները շարահյուսական մակարդակում կատարում են ածական խոսքի մասին բնորոշ պաշտոններ: Հայերենի ածականական դարձվածքները հանդես են գալիս հետևյալ պաշտոններով՝ *որոշիչ, ձևի պարագա, ստորոգելիական վերադիր, միջոցի անուղղակի խնդիր*: Պարսկերենում այդ կապակցությունները հիմնականում հանդես են գալիս որպես *որոշիչ*:

Հայերենի ածականական դարձվածքների բաղադրիչներն արտահայտում են լրացում-լրացյալի հարաբերություններ. ինչպես, *խոտը բերանին* – խեղճ, հիմար, *աչքից ընկած* – արհամարիված, անտարբերության մատնված, *օձի կծած* – չար, չարակամ: Պարսկերենում հանդիպում են դարձվածքներ, որոնց բաղադրիչների իմաստային հարաբերությունն արտահայտվում է իզաֆեթային կապերով կամ Նախդրային կառուցվածքով: Իզաֆեթային կապով ձևավորված դարձվածքներից են. برج زهر مار - *borj-e zahr-e mār* (բռց. օձի թույլի աշտարակ) - չար, ջղային, پنجه آفتاب - *panje-ye āftāb* (բռց. արևի չանչ) – շատ գեղեցիկ: Նախդրային կապակցությամբ են ձևավորվել հետևյալ դարձվածքները. سر به زیر - *sar be zir* (բռց. գլուխը դեպի ներքև) – խոնարհ, հնազանդ, سر به هوا - *sar be havā* (բռց. գլուխը դեպի օդ) – ցոված, پا به راه - *pā be rāh* (բռց. ոտքը դեպի ճամփան) – լսող, հեզ:

Հայերենի և պարսկերենի բայական դարձվածքները շարահյուսական մակարդակում հանդես են գալիս հարացուցային սահմանափակ ձևերով, հայերենում դրանք ձևավորվում են ստորադասական, իսկ պարսկերենում՝ կոպուլյատիվ կապերով:

Երրորդ ենթագլուխը նվիրված է անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների ձևաբանա-շարահյուսական առանձնահատկություններին: Չուզադրվող լեզուներում անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները կազմվում են ազատ կապակցության սկզբունքով, բայական բաղադրիչը հիմնականում արտահայտվում է երրորդ դեմքով, հմմտ. հայ. Կարծես երկնքից է իջել: Իրեն այնպես է զգում, ինչպես ծուկը՝ ջրում, պրսկ. جیبش را تاز انکبوت گرفته است - Jib-aš rā tār-e ankabut gerefte ast. Աղքատ է, ապրելու հնար չունի: (բռց. Գրպանում սարդոստայն է գործվել:), خرش از پل گنشت - Xar-aš az pol gozašt. Հաջողակ է: (բռց. Իր էլը կամուրջն անցավ:): Բայ-ստորոգյալը հանդես է գալիս եղանակաժամանակային սահմանափակ ձևերով, հմմտ. հայ. Վիզը տանձի կոթ է դարձել: Ոնց որ ոտքերիցս քար կախած լինեն: Սրտին խփես, արյուն չի գա: Պրսկ. نام وی در گل افتاد - Nām-e vey dar gol oftād. Համբավը փչացավ: (բռց. Անունն ընկավ ցեխի մեջ:): هر که از پل بگذرد، خندان بود. - Har ke az pol begozarad, xandān bovad. Հաջողակը ուրախ է: (բռց. Ով կամրջով անցնի, ուրախ կլինի:):

Եզրակացությունների մեջ ամփոփվում են քննության ենթարկված անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների ինչպես իմաստակառուցվածքային, այնպես էլ քերականական առանձնահատկությունները:

1. Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները հայերենում և պարսկերենում, ըստ իմաստային խմբերի, արտահայտում են անձի արտաքին և ներքին հատկանիշներ:
2. Հայերենի և պարսկերենի՝ անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները բաշխվում են ըստ հետևյալ թեմատիկ խմբերի՝ գունանուններ, սոմատիզմներ, կենդանանուններ, բուսանուններ, կրոն, բնություն և այլն:
ա) Տարբեր թեմատիկ խմբերի մեջ ընդգրկված դարձվածքներն արտահայտում են ամենատարբեր հատկանիշներ. *գսպվածություն, համբերություն, թշնամանք, չկամություն, անհամբերություն, անտեղյակություն, անտարբերություն, քաջություն, ոգևորություն, թուլություն, աշխատասիրություն, հնազանդություն, խեղճություն, փնթիություն* և այլն: բ) Բուսանուններով, կրոնական ոլորտի բառամիավորներով և անձնանուններով ձևավորված դարձվածքներն ունեն ազգային-մշակութային իմաստային երանգավորում:
3. Չուզադրվող լեզուներում անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները բնութագրվում են միջկապակցական իմաստներով: Դրանք՝ ա) հանդես են գալիս տարբերակներով՝ **բառային, քերականական և քանակական**. պարսկերենին հատուկ են նաև **հնչունական, ուղղագրական ու համակցված** տարբերակները, որոնք հայերենում չեն հանդիպում, բ) ունեն

հոմանշային ու հականշային ձևախմբաստային խմբեր, գ) հոմանիշ դարձվածքները հիմնականում լինում են նույնակառույց ու տարակառույց, իսկ հականիշ դարձվածքները կազմվում են հականիշ բաղադրիչներով, ինչպես նաև կարող են ունենալ տարբեր կառուցատիպեր:

4. Իմաստային համարժեքության տեսանկյունից զուգադրվող լեզուների դարձվածքների մեջ կարելի է առանձնացնել համարժեքներ, համապատասխանություններ և անհամարժեք դարձվածքներ:
5. Հայերենում և պարսկերենում **անվանողական** դարձվածքներն ունեն բառակապակցության կառուցատիպ, որոնք լրիվ կամ մասնակի վերահիմնատավորմամբ երկբաղադրիչ, եռաբաղադրիչ կամ բազմաբաղադրիչ կապակցություններ են: Անվանողական դարձվածքների շարքն են դասվում գոյականական, ածականական և բայական դարձվածքները:
6. Չուգադրվող լեզուների **գոյականական դարձվածքները** հիմնականում երկբաղադրիչ են և ձևավորվում են նույն՝ գոյական+գոյական, ածական+գոյական և դերբայ+գոյական կաղապարներով:
 - ա) Հայերենի ածական+գոյական կաղապարով կապակցություններին պարսկերենում համապատասխանում են շրջուն կաղապարով կառույցները. պարսկերենում լրացում-լրացյալ հարաբերությունը հետադաս է և արտահայտվում է իզաֆեթային կապով: բ) Պարսկերենում գոյականական դարձվածքների կազմությանը կարող է մասնակցել նաև բայահիմքը՝ շարահասվելով գոյականից հետո: գ) Թվական խոսքի մասով եռանդամ կառույցները բնորոշ են հայերենին: Հայերենում դարձվածքների կազմությանը մասնակցում են հարակատար և ենթակայական դերբայները, իսկ պարսկերենում՝ անցյալ դերբայը: դ) Հայերենում դարձվածքների գերադաս բաղադրիչը վերջադաս է՝ արտահայտված ուղղական հոլովով, իսկ պարսկերենում՝ նախադաս, քանի որ ձևավորված է լինում իզաֆեթային կապով:
7. **Ածականական դարձվածքները** հայերենում վիճակագործեն ավելի շատ են, քան պարսկերենում:
 - ա) Երկբաղադրիչ դարձվածքները հայերենում ձևավորվում են անուն խոսքի մասերով, իսկ պարսկերենում՝ նաև բայի խոնարհված ձևով և կապով: բ) Պարսկերենում եռանդամ դարձվածքների կազմությանը մասնակցում են նաև բայի խոնարհված ձևերը, նախդիրները և մակբայները: գ) Հայերենի քառանդամ դարձվածքների կազմությանը մասնակցում են դերբայները՝ հարակատար կամ ենթակայական: Զառանդամ ածականական կապակցությունները պարսկերենում համեմատություն դարձվածքներ են:
8. **Բայական** դարձվածքները զուգադրվող լեզուներում լինում են տարբեր կառուցատիպերի.
 - ա) Պարսկերենում երկբաղադրիչ կապակցությունների անվանական մասում կարող է հանդես գալ նաև նախդիր, բ) Պարսկերենում եռաբաղադրիչ դարձվածքները լինում են նախդրավոր, (գոյականական կառույց + xod

անդրադարձ դերանուն + բայ), իսկ բազմաբաղադրիչ դարձվածքների շարքում առանձնանում են շրջանակային կառույցով կապակցությունները:

9. **Հաղորդակցական դարձվածքները** հայերենում և պարսկերենում ունեն նախադասության կառուցատիպ, բաղադրիչների հստակ, գրեթե անփոփոխ քանակային կազմ, որոնց բայական բաղադրիչը հանդես է գալիս սահմանափակ հարացուցային ձևերով:

10. Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների քերականական արժեքի քննությունը ցույց է տալիս, որ զուգադրվող լեզուների կապակցություններն ի հայտ են բերում ձևաբանական և շարահյուսական յուրահատկություններ, որոնք պայմանավորված են այդ լեզուների տիպաբանական կառուցվածքով:

11. Անձի հատկանիշ արտահայտող անվանողական դարձվածքները զուգադրվող լեզուներում բնութագրվում են հետևյալ ձևաբանական հատկանիշներով:

ա) Հայերենի գոյականական դարձվածքներին հատուկ են հոլովի և թվի կարգերը, պարսկերենի դարձվածքներին՝ միայն թվի կարգը: Բ) Հայերենի ածականական դարձվածքների գոյականական բաղադրիչը հողառու է՝ ուղղական հոլովով, ածականական բաղադրիչը միշտ արտահայտվում է դրական աստիճանով: Պարսկերենում ածականական դարձվածքների ձևաբանական կարգերը հստակ արտահայտված չեն, իսկ բայական դարձվածքների գոյականական բաղադրիչը զուրկ է հոլովի կարգից՝ ի հակադրություն հայերենի:

12. Անձի հատկանիշ արտահայտող անվանողական դարձվածքները զուգադրվող լեզուներում բնութագրվում են հետևյալ շարահյուսական հատկանիշներով:

ա) Հայերենի գոյականական դարձվածքների բաղադրիչներն արտահայտում են ստորադասական և համաստորադասական հարաբերություններ, պարսկերենում բաղադրիչները կապակցվում են գլխավորապես իզաֆեթային կապով: Բ) Հայերենի բայական դարձվածքները շարահյուսական մակարդակում արտահայտում են ստորադասական, իսկ պարսկերենում կոպուլյատիվ հարաբերություններ:

13. Անձի հատկանիշ արտահայտող հաղորդակցական դարձվածքները հայերենում և պարսկերենում հանդես են գալիս պատմողական, հարցական, մասամբ՝ բացականչական երանգով:

14. Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների զուգադրական քննությունը վեր է հանում հայերեն և պարսկերեն լեզվակիր հանրությունների լեզվամտածողության, աշխարհընկալման ինչպես ընդհանրություններն ու յուրահատկությունները, այնպես էլ տարբերությունները:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրատարակություններում:

1. Անձի հատկանիշ արտահայտող անվանողական դարձվածքների շարահյուսական առանձնահատկությունները հայերենում և պարսկերենում,

Մեսրոպ Մաշտոց համալսարան, Լրատու հանդես, 1(23), «Լիմուշ» հրատարակչություն, Երևան, 2020, էջ 223-232:

2. Հայերենի և պարսկերենի անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքների կառուցատիպերը, «Ջահուկյանական ընթերցումներ», Գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2019, էջ 56-65:

3. Անձի հատկանիշ արտահայտող գոյականական դարձվածային միավորները հայերենում և պարսկերենում, Հայագիտական հանդես, 4 (42), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, 2018, էջ 34-46:

4. Անձնանիշ դարձվածքների ձևաիմաստային հարաբերակցությունը հայերենում և պարսկերենում, Բանբեր 1(46), Վ. Բոյունսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Երևան, 2018, էջ 162-171:

5. Անձնանիշ դարձվածային միավորների տարբերակները պարսկերենում, Գիտական տեղեկագիր, 1-2 (34-35), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, 2018, էջ 41-45:

6. «Գլուխ» բաղադրիչով սոմատիկ դարձվածքները հայերենում և պարսկերենում, Գիտական աշխատություններ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2018, էջ 68-76:

7. Варианты фразеологических сочетаний со значением признака личности в армянском языке (соавтор Л. Хачатрян), European Journal of Humanities and Social Sciences, # 1, Vienna, 2018, стр. 54-57:

Торосян Рипсима Вагеевна
Фразеологизмы, характеризующие качества личности, в современном
армянском и персидском языках
(сопоставительное исследование)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 – “Общее и сравнительное языкознание”.

Защита состоится 23 мая 2022 года в 15.00 ч. на заседании специализированного совета ВАК по лингвистике 019 при Институте языка им. Р. Ачаряна Национальной академии наук РА по адресу: 0015, Ереван, ул. Григора Лусаворича 15.

Резюме

Диссертация посвящена исследованию фразеологизмов, характеризующих качества личности, в современном армянском и персидском языках. Анализ этих фразеологических единиц позволяет составить представление о некоторых специфических особенностях национальных характеристики, мировоззрения и миропонимания данного языкового общества. Изучение фразеологизмов, выявляющих качества личности, в сопоставляемых языках особенно важно с точки зрения межкультурных коммуникаций. Сравнительный анализ фразеологизмов армянского и персидского языков позволяет выяснить сходства и различия языкового мышления соответствующих языковых обществ.

Научная новизна диссертации состоит в сравнительном изучении фразеологизмов, выявляющих качества личности в армянском и персидском языках. Такое исследование до сих пор не проводилось, и существует необходимость выявления типологии фразеологизмов – структурных и семантических сходств и различий двух языков. Фразеологизмы персидского языка, в отличие от фразеологизмов армянского языка, не подвергались всестороннему теоретическому исследованию. Это также подчеркивает актуальность диссертации.

В работе использованы как описательные и сопоставительно-сравнительные методы, так и методы типологического анализа.

Теоретическое значение работы заключается в применении типологического метода к изучению фразеологизмов в компаративном аспекте.

Практическое значение диссертации заключается в применении ее результатов в университетских курсах фразеологии, типологии и в процессе составления персидско-армянского и армяно-персидского фразеологических словарей.

Работа состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и составляет в целом 122 компьютерные страницы.

В введении исследуются вопросы, связанные с теорией фразеологии, представлены взгляды лингвистов, анализировавших фразеологические единицы в широком и узком смысле, сущность фразеологизмов, выявляющих качества личности, и другие смежные вопросы.

В первой главе, состоящей из трех разделов, проводится сопоставительный анализ семантически-тематических групп и взаимосвязанных значений фразеологизмов, характеризующих особенности личности в армянском и персидском

языках. Фразеологизмы различных тематических групп выражают разное значение. Исследования показывают, что фразеологизмы, характеризующие качества человека, могут иметь разные варианты ряды, выявлять синонимичность и антонимичность, эквивалентность и безэквивалентность.

Во второй главе, состоящей из двух разделов, проводится сопоставительный структурный анализ фразеологизмов, указывающих на качества личности, в армянском и персидском языках. В ходе исследования выявлены различия и соответствия структурных подклассов субстантивных, адъективных, глагольных и коммуникативных фразеологизмов. Иногда указанные различия и соответствия совпадают в рассматриваемых языках, но в большинстве случаев они отличаются. Различия указанных особенностей зависят от типологических особенностей изучаемых языков.

В третьей главе, состоящей из трех разделов, проводится сопоставительный грамматический анализ фразеологизмов, характеризующих качества личности, в армянском и персидском языках. В первой и второй подглавах исследованы морфологическо-синтаксические особенности номинативных фразеологизмов, указывающих на качества личности. Обладая качествами существительных, прилагательных и глаголов, эти единицы имеют морфологические и синтаксические особенности данных частей речи. Третья подглава посвящена грамматическим особенностям коммуникативных фразеологизмов.

В заключении работы обобщаются результаты исследования. Фразеологизмы существуют в языке в тесной связи с лексикой, их изучение помогает лучше познать их структуру и употребление в речи. Знакомство с армянской и персидской фразеологией позволяет глубже понять историю, характер и языковое мышление армян и иранцев, которые в разные эпохи имели разносторонние отношения. Сопоставительным анализом фразеологизмов, характеризующих качества личности, выявлены их значительное сходство на семантическом и структурном уровне. Несмотря на различный строй языков, и, следовательно, различные способы выражения грамматических отношений между компонентами фразеологических единиц в армянском и персидском языках, можно обнаружить соответствие эквивалентов различных типов в указанных языках. Наличие или отсутствие структурно-семантических эквивалентов в сопоставляемых языках может быть прогнозировано по некоторым характеристикам самих фразеологических единиц исходного языка.

Hripsime Vahe Torosyan
Phraseological Units Indicating an Individual's Attributes in Armenian and Persian Languages
(Contrastive Investigation)

Thesis for the scientific degree of a Candidate of Philological Sciences on the specialty 10.02.02 - "General and Comparative Linguistics"

The defense of the thesis will be held on 23 May, 2022 at 15.00, at the session of the Specialized Council on Linguistics 019 SCC (Supreme Certifying Committee) in the Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences, RA (address: 0015, Yerevan, Grigor Lusavorich st.15).

Summary

The dissertation investigates the phraseological units indicating an individual's personal and physical attributes in the modern Armenian and Persian languages. With the analysis of the aforementioned phraseological units, it is possible to make deductions about the features of the national characteristics, worldview and perceptions of a given linguistic society. Within the scope of the studies on comparable languages, the phraseological units indicating an individual's attributes are particularly essential from the intercultural communications point of view. Comparison and consideration of phraseological units of Armenian and Persian lead to finding out the similarities and differences of the linguomentality of these significantly diverse linguistics societies.

The novelty of the work lies in the need for a comparative study of phraseological units indicating an individual's attributes in Armenian and Persian languages. Such a study has not yet been carried out and there is a need to identify the typology of phraseological units – structural and semantic similarities and differences between two languages. Unlike the phraseological units of the Armenian language, the phraseological units of Persian, do not have a comprehensive theoretical study, which determines the relevance of the dissertation. In the work are used descriptive, comparative, typological methods and ways to interpret various phraseological units.

The theoretical value of the research is the contribution to the integrity of typological studies in the field of phraseology.

The practical significance of the thesis is applying the results of the work in university courses of phraseology and typology, contributing the process of compiling the Persian-Armenian and Armenian-Persian phraseological dictionaries.

The work consists of an introduction, three chapters, conclusions along with a list of references, and is 122 computer pages in total.

The introduction explores issues related to the theory of phraseology, considering linguists' views regarding phraseological units with both broad and narrow interpretations. Additionally, it touches upon the essence of phraseological units indicating an individual's attributes, as well as other related issues.

The first chapter, consisting of three sections, provides a comparative analysis of the semantic-thematic groups and interrelated meanings of phraseological units indicating an individual's attributes in Armenian and Persian. Phraseological units of different thematic groups express numerous meanings. The study shows that phraseological units indicating

an individual's attributes can have different series of variants, reveal synonymy and antonymy, equivalence and non-equivalence, and so on.

In the second chapter, which consists of two sections, a comparative structural analysis of phraseological indicating an individual's attributes in Armenian and Persian is carried out. The study reveals the differences and correspondences of structural subclasses of substantive, adjectival, verbal, and communicative phraseological units. Sometimes these differences and correspondences coincide in the languages under consideration but they differ in most cases. The differences in these features depend on the typological peculiarities of the studied languages.

The third chapter, which consists of three sections, provides a comparative grammatical analysis of phraseological units indicating an individual's attributes in Armenian and Persian. The morphological and syntactic features of nominative phraseological units indicating an individual's attributes are studied in the first and second subchapters. Having the functionalities of nouns, adjectives, verbs, these units have morphological and syntactic features of these parts of speech. The third subchapter discusses the grammatical peculiarities of communicative phraseological units.

The conclusion summarizes the results of the study. Phraseological units exist in the language strongly correlated with vocabulary; their study helps to understand their structure and usage in speech better. Analysis of the Armenian and Persian phraseology develops a deeper understanding of the history, character, and linguomentality of Armenians and Iranians, carrying diverse relations over the eras. A comparative study of phraseological units indicating an individual's reveals the linguistic similarities at the semantic and structural levels. Despite the different structure of languages, and consequently, different ways of expressing grammatical relations between the components of phraseological units in Armenian and Persian, correspondences of equivalents of various types in these languages can be found. The presence or absence of structural-semantic equivalents in the compared languages can be predicted by certain characteristics of the original phraseological units themselves.

